յանդգներ ասել թէ հայը հայրենիք չունի, թէ հայոց լեզուն չը կայ, ընդունակ չէ զարգացման, կամ մանկական հասակի մէջն է գտնվում...

Իսկ այդ վերջին ժամանակներ ի՞նչ ենք տեսնում. միմիայն «Մրշակին» հակառակելու համար, մեր հակառակորդները այժմ պատրաստ են մերժել, ուրանալ իրանց առաջվայ ամենաթանդագին սրկրունքները....

Ով որ ուշադրութեամբ հետեւել է մեր հակառակորդների վերջին տարվայ գործունէութեանը, կը տեսնի, որ նրանք միմիայն անհաշտ ատելութենից դրդված դէպի «Մշակը» սկսում են մինչև անգամ այդպիսի մտքեր յայտնել, թէ հայը հայրենիք չունի, թէ հայոց ազգը չունի այն կուլտուրական ոյժը, որ կրանի քիւրդերին կամ Փոքր-Ասիայի այլ անհաշտ ցեղերին, և ո՞վ գիտէ, դուցէ քիւրդերը ժամանակով կը հանդիսանան հայերից ուժեղ քաղաքակրթութեան մէջ, թէ խակպէս հայոց լեզուն չը կայ և եթէ ամբողջ ազգը մաղես, հայերէն լաւ գիտցող հազիւ երկու երեք անձն միջից կը դուրս գան, թէ վերջապէս, հայոց լեզուն, թէեւ որպէս մայրենի լեզու, որպէս մանկավարժական միջոց հարկաւոր է հայ մանուկներին, բայց ինքն մանկական հասակի մէջ գտնվելով, վնասակար ցոյց տալ հասարակութեանը,—այդ մեզ չէր զարմացնում. Մենք վաղուց ընտելացած էինք Միմէոնեանցի այդ ազնիւ միջոցներին. Միմէոնեանց իր լրագրով կարող է գոյութիւն ունենալ միայն այն ժամա՛կ, երբ կը շղոչորթի ամբոխի ստոր զգացմունքներին, նրա սնոտիապաշտութիւններին, նրա կոյր մոլեռանդութեանը, նրա վատ հակումներին, նրա խաւարասիրութեանը....

Մենք հաւատացած ենք, որ նա ինքն էլ հասկանում է թէ չատ ազնիւ կերպով չէ վարվում,—բայց այսպէս վարվելը նրա նիւթական շահերն են պահանջում.... Ամբոխի մէջ դեռ կան բաւական տգէտներ, մոլեռանդներ, յիմարներ, խաւարասէրներ,—և ահա «Մեղուն» նրանց արձագանք, նրանց բերան, օրգան է դառնում, փոխադարձապէս նրանց էլ սնունդ տալով.

Մենք անձամբ ծանօթ էինք Մոսկվայում «Московск. Вѣд.» լրագրի խմբագիր, պ. Կատկովի հետ. Նա չատ լուսաւորված, ուսում առած մարդ է. Բայց ուրիշ բան է ազնուութիւնը. դա կրթութեան հետանք է. Մենք խօսում ենք լրագրական ազնուութեան մասին, մենք գործ չունենք Կատկովի մտաւոր կեանքի ազնուութեան կամ անազնուութեան հետ. Կատկովը խօսելու ժամանակ, մի մտաւոր չրջանի մէջ ի հարկէ չէր հեգնի որ հրէան միւս մարդկանց պէս մարդ է, որ օրինակ, ռուսաստանցի հրէան առուսաց պետութեան նոյնքան լաւ, օգտակար է և հաւատարիմ հպատակ է, որքան և ռուսաստան բուն ռուս քաղաքացին. Երկուսն էլ ռուս երկրի քաղաքացիներն են, այն գանգատութեամբ միայն, որ մէկը քրիստոնէական կրօնին է պատկանում, իսկ միւսը մովսիսական կրօնին. Բայց այսպէս խօսելուց յետոյ, նոյն պ. Կատկովը դուրս էր գալիս փողոց, անցնում էր օրինակ Օխոտնի Ռիադ ասված բազարով և պատմամբ լսում էր, ինչպէս ամբոխներից մէնը անոգոյժ հայհոյում էր հրէային, նրան անիծված ջհուդ անուանելով,—և ահա նոյն կատկով, մանաւոր չրջանում իր ասած խօսքերը մոռանալով, միւս օր գրում էր իր լրագրի մէջ մի առաջնորդող յօդուած, որտեղ հայհոյում էր հրէաներին, ձայնակցում էր ամբոխին, յայտնում էր այն միտքը թէ հրէայնս չը պէտք է տալ հաւասարութիւններ միւս քաղաքացիների հետ. Նա այդ անում էր հետեւեալ պատոդութեան վրա հիմնվելով ամբոխի մեծամասնութիւնը դեռ տգէտ, խաւար և մոլեռանդ է, իսկ ինչ գործս է նրան կրթել, նրան լուսաւորել. այդպիսով ես միայն թշնամիներ կուենեմ և լրագիրս չատ քիչ բաժանորդներ կունենայ. Թող բթամիտ ժողովուրդը բթամիտ մնայ, ինձ ինչ փոյթ....Բայց չղոչորթելով ամբոխի ստոր խնամիներին, ձայնակցելով ամբոխի կոյր մոլեռանդութեանը, ես չատ բաժանորդներ կունենամ, լրագիրս չատով էլ աւելի կը ծախվի, նա յայտարարութիւններ էլ չատ կունենայ, որովհետև չատ տարածված թերթ կը լինի, ուրեմն ես չատ փող կունենամ.

Ահա ինչպէս են գործում Կատկովի պէս մարդիկ. «ճշմարտութեան, մանաւանդ տարածմամ ճշմարտութեան յայտնելը նիւթական չահ չի տայ, իսկ ժողովրդի տգիտութեան չղոչորթելը չատ չահաւէտ բան է, ուրեմն ես ընտրում եմ երկրորդ ճանապարհը. ինձ ինչ փոյթ ապագայ սերունդի անէծքը իմ յիշատակին, նրա զզուանքը իմ անունը բերանից արտասանելու ժամանակ....»

«Մեղուն» էլ մեր հայոց Կատկովն է. Նա էլ այսպէս ազնիւ է գործում. իսկ Կատկովը իր կողմից, հեռու է պ. պ. Գրէյչ և Բուլգարինի, որոնք մի ժամանակ հրատարակում էին Ս. Պետերբուրգում «Сѣверная Пчела» (Հիւսիսային Մեղու) լրագիրը.

Մոլեռանդութեան զրգռելը, տգիտութեան չղոչորթելը, խաւարասիրութեան ձայնակցելը, հայհոյանք, բամբասանք, դատաճանութիւն, կեղտաղբ, անձնական պատիւն դիպչելը, ճշմարտութեան յեղաշրջելը, սուտ լուրեր հնարելը այն մարդու մասին, որ իրան թշնամի է,—ահա Միմէոնեանցի, Կատկովի, Բուլգարինի և սրանց նման ստոր անձնաւորութիւնների, հասարակութեան այդ վնասակար առաջնորդների գէրքերը....Եւ այդ բոլորը կատարվում է, որովհետև չահաւէտ է....

Ուրեմն Միմէոնեանցի վարմունքը հասկանալի է. Բայց ինչով բացատրել պ. Գ. Ե-ի յօդուածի չարաճիքը, որ նորերումս տպվեցաւ «Մեղու» № 57 մէջ,—դժուար է ասել.

II

Դեռ պէտք է ծանօթացնում ընթերցողին թէ ով է Գ. Ե. որ կեղծեալ կերպով իր անուան և ազգանուան միայն սկզբնական տառերն է տառապարել իր ՀՆորհալի յօդուածի տակ. Դա ուսում առած մարդ է, համալսարանական է, Ս. Պետերբուրգի համալսարանի իրաւաբանութեան կանդիդատ է, և այլն և այլն....

Այդ տեսակ մարդ, ի հարկէ, չէ կարող գրել առանց իր գիտութիւնը ցոյց տալու.... Եւ ինչ գիտութիւն.... Բանասիրական առաջին բաժնում ամէն բան կայ. եւրոպական երկիրների վրա ուսումնական հարեւանցի հայեացք, էժան պատմութիւն, կրօնի և խղճի ազատութեան գաղափարների ծուռ ու սխալ մեկնութիւն, Բէնդլոյի անգլիական պարլամենտում երբում չը տալու պատճառների բացատրութիւն և այլն....

Երկրորդ երեսից միայն Գ. Ե. սկսում է ինքնուրոյն մտքեր յայտնել....

Ցեսէ՞ք ինչ գեղեցիկ մտքեր. «Եկեղեցին, ոչ մի եկեղեցին, ասում է Գ. Ե., չէ կարող արգելել կամ չարգելել կրօնի կամ խղճի ազատութեան սկզբունքը, որովհետև այդ սկզբունքների սերբագործումը պատկանում է պետութեանը, ուրեմն չը պէտք է էլ դիմել մի եկեղեցուն, պահանջելով որ նա ազատամիտ լինի» Ցաւում ենք որ այլ և այլ պատճառներով երկար ու բարակ այդ մասին դասել միջոց չունենք. Բայց թող լաւ մտածի Գ. Ե., արդեօք նա ինքն չէ ամաչում որ այդ տեսակ մտքեր է յայտնում.

Թող ասածն բաւական լինի պ. Գ. Ե-ին, որ կայացած հաճախանութիւնը յոյս է տալիս, որ Թիւրքիան կը խնայէվի Եւրոպայի միացեալ կամքի առաջ, հարկաւոր է կենդանացնել Բերլինի գաղնագրի մեռած յօդուածները և տեսնել Բ. Դրանը, որ նա չուշացնի հանգիստաւոր կերպով իր վրա արած պարտականութիւնների կատարելը: Ինչպէս յայտնի է, Բերլինի գաղնագիրը առաջ բերեց և հակառական ենդիրը:

Գաղնագրի 61-դ յօդուածով Բ. Դուռը պարտաւորվեցաւ «առանց յետաձգելու, վերանորոգութիւններ մտցնել Հայերով բնակվղական երկիրների մէջ և ապահովել նրանց քիւրդերի, չերքեզների և այլ վայրենիների յարձակմունքներից: Զը նայելով, որ երեսուարի անցել է այն ժամանակից, երբ Բ. Դուռը հանդիսաւոր կերպով իր վրա առաւ այդ պարտաւորութիւնները, նա ոչ թէ միայն չը մտցրեց վերանորոգութիւններ Հայաստանի մէջ, այլ ձգտում էր ստանալ Փոքր-Ասիայի քրիստոնեաների տանջանքները: Ամենայն օր Հայաստանից սրտամրկիկ լուրեր են ստացվում այն բռնաբարութիւնների մասին, որ անում են վայրենիները քրիստոնեայ ազգաբնակութեան հետ: Թիւրքաց կառավարութիւնը ոչ թէ միայն ոչինչ մէջոց չէ գործադրում անմեղաւորութեան և զոյքի ապահովութեան վերականգնման համար, այլ ընդհակառակը ուրախութեամբ կը խրախուսանէր ամենանգիտ գործերի այդպիսի գործութիւնը:

Բոլոր այս ասածները հաստատվում են Բ. Դրան պատասխանով Բերլինի գաղնագիրը ստորագրող պետութիւնների ներկայացուցչների գրութեան այն մասին, որ վերաբերում է Փոքր-Ասիայի վերանորոգութիւնների հարցին: Ինչպէս յայտնի է այդ պատասխանով Բ. Դուռը ամենից առաջ ձգտում է հաւատացնել Եւրոպային, որ Փոքր-Ասիայի քրիստոնեաների տանջանքների մասին տարածված բոլոր լուրերը անհիմն են: Այդ ստախօսութիւնը վրդովիցուցիչ է մանաւանդ այն պատճառով, որ քրդերի և չերքեզների Հայաստանի մէջ ամենօրեայ անպատիժ կատարած բռնաբարութիւնների, կողոպտումների և սպանութիւնների մասին ստացված են ոչ մէկ անգամ, Կատկովի, Բուլգարինի և սրանց նման ստոր անձնաւորութիւնների, հասարակութեան այդ վնասակար առաջնորդների գէրքերը....Եւ այդ բոլորը կատարվում է, որովհետև չահաւէտ է....

Ուրեմն Միմէոնեանցի վարմունքը հասկանալի է.

Բայց ինչով բացատրել պ. Գ. Ե-ի յօդուածի չարաճիքը, որ նորերումս տպվեցաւ «Մեղու» № 57 մէջ,—դժուար է ասել.

II

Դեռ պէտք է ծանօթացնում ընթերցողին թէ ով է Գ. Ե. որ կեղծեալ կերպով իր անուան և ազգանուան միայն սկզբնական տառերն է տառապարել իր ՀՆորհալի յօդուածի տակ. Դա ուսում առած մարդ է, համալսարանական է, Ս. Պետերբուրգի համալսարանի իրաւաբանութեան կանդիդատ է, և այլն և այլն....

Այդ տեսակ մարդ, ի հարկէ, չէ կարող գրել առանց իր գիտութիւնը ցոյց տալու.... Եւ ինչ գիտութիւն.... Բանասիրական առաջին բաժնում ամէն բան կայ. եւրոպական երկիրների վրա ուսումնական հարեւանցի հայեացք, էժան պատմութիւն, կրօնի և խղճի ազատութեան գաղափարների ծուռ ու սխալ մեկնութիւն, Բէնդլոյի անգլիական պարլամենտում երբում չը տալու պատճառների բացատրութիւն և այլն....

Երկրորդ երեսից միայն Գ. Ե. սկսում է ինքնուրոյն մտքեր յայտնել....

Ցեսէ՞ք ինչ գեղեցիկ մտքեր. «Եկեղեցին, ոչ մի եկեղեցին, ասում է Գ. Ե., չէ կարող արգելել կամ չարգելել կրօնի կամ խղճի ազատութեան սկզբունքը, որովհետև այդ սկզբունքների սերբագործումը պատկանում է պետութեանը, ուրեմն չը պէտք է էլ դիմել մի եկեղեցուն, պահանջելով որ նա ազատամիտ լինի» Ցաւում ենք որ այլ և այլ պատճառներով երկար ու բարակ այդ մասին դասել միջոց չունենք. Բայց թող լաւ մտածի Գ. Ե., արդեօք նա ինքն չէ ամաչում որ այդ տեսակ մտքեր է յայտնում.

Թող ասածն բաւական լինի պ. Գ. Ե-ին, որ մենք չենք էլ դիմել երբէք եկեղեցուն, պահանջելով որ նա ազատամիտ և համբերող դառնայ. մենք խօսել ենք ժողովրդի հետ և նրան մէջտեղ ելել ենք համոզել որ համբերող, ազատամիտ լինի, թողնի ամէն մարդուն իր հաւատը և ամէն հայի վրա նայի հայութեան տեսակէտից:

«Մշակը» գուցէ ազգասիրական կէտից է նայում հարցի վրա, խոստովանվում է Գ. Ե., բայց չէ նկատում որ պ. Ամիրխանեանի նպատակը ուրիշ է և դառնում է նրա գործիք.

Ուրեմն «Մշակը» համ ազգասիրական կէտից է նայում, համ էլ ազգագրական մանուկ է որ կուրօրէն ուրիշ մարդու ազդեցութեան տակ է ընկնում, այն էլ Ամիրխանեանցի պէս մի չահասէր մարդու գործիք է դառնում.... Չը գիտենք, թող այդ մասին դասի ընթերցողը, ով աւելի չահասէր է. Ամիրխանեանցը, որ իր սիրայ թէ ուրիշ համոզմունքի պատճառով և այդ համոզմունքի մէջ տգիտն կերպով մնալու պատճառով հայերի մէջ ազատվելով զրկվում է վերջին կոտր հայից, տարված լինելով գլխից գէնից հաւաքված թարգմանութիւններով և գերմանական դպրոցի մէջ դաստաուութեամբ ապրել, Ամիրխանեանց, որ ինչքան էլ հիմնաւոր կերպով գիտենար եթէ թէ ուրիշ հին և նոր լեզուներ, հմուտ լինէր մանկավարժութեան, բայց բողոքական լինելով, նաեւ չունի ոչ մի հայոց զրոցի մէջ մտնել, և կրթէ հայերից իր հաղը ստանալու լինէր, պէտք է քաղցած մեռնէր, Ամիրխանեանցի պէս մարդն է չահասէր, թէ Գ. Ե-ի պէս հանապարանական մարդիկ, որոնք պատրաստ են ամէն տեսակ չահասէրի համար որը հինգ անգամ ծախել իրանց համոզմունքը, ամենախոր կերպով գլուխ տալ, շղոչորթիել ամէն մի բթամիտ հասարակաց, միայն թէ այս կամ այն բանի ի ընդհանուր ժողովի ժամանակ ձայն ստանան բանկէ խորհուրդի անդամ ընտրվելու համար, ստոր ակցիոնների վրա նստելու համար....Այդ տեսակ մարդիկ, որոնց իւրաքանչիւր քայլը, խօսքը, գլուխ